Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԸ ԵՎ «ՄՇԱԿԸ»

(Մեծ դրամատուրգի մահվան 100-ամյակի կապակցությամբ)

100 տարի առաջ 1912-ին նշվում էր «Մշակ» լրագրի լույս ընծայման 40-ամյակը, և աշխարհի բոլոր ծայրերից շնորհավորական հեռագրեր էին ստացվում խմբագրությունում: Հոբելյանական հանձնաժողովի պատվավոր նախագահն էր Գաբրիել Սունդուկյանը, որը Գր. Արծրունուն համագործակցել է նշանավոր լրագրի գործունեության ողջ ընթացքում: Այս առումով շատ հետաքրքրական է մեծն վիպասան Ռաֆֆու «Մեր երիտասարդությունը» հոդվածը, որտեղ խոսվում է այն անքուն գիշերների մասին, որ անց էին կացնում Թիֆլիսի այնպիսի առաջադեմ մտավորականներ, ինչպիսիք էին Գ. Չմշկյանը, Գ. Սունդուկյանը, Գր. Արծրունին, Ռաֆֆին, Պ. Պռոշյանը և այլք, որոնք կրքոտ քննարկում էին կազմակերպում ապագա լրագրի ծրագիրը կազմելիս:

Այսինքն, 40 տարի Սունդուկյանը եղել է «Մշակի» գլխավոր աշխատակիցներից մեկը, մեծ խորհրդատուն:

Եվ հանկարծ ստացվեց ցավալի լուրը՝ իր մահկանացուն կնքեց «Պեպոյի», «Քանդած օջախի» հանճարեղ հեղինակը՝ ի մեծ կորուստ հայ դրամատիկական գրականության: Չնայած իր 87-ամյա տարիքին, նա պահպանում էր իր կորովը, մտավոր ձիրքերը, և նրա խորհրդածությունների, հոգսերի միակ առարկան հայ գրականությունն էր, հայ գեղարվեստը, հայ թատրոնը, հայ լրագրությունը:

Մահից ընդհամենը օրեր առաջ նա «Մշակում» տպագրեց իր «Կտակը», իսկ վերջին գրական գործը՝ «Համալի մասլահաթը» ժողովածուն կազմված էր «Մշակի» մեջ տարիների ընթացքում տպագրված իր ֆելիետոններից, որոնց վրա ավելացրել էր հատկապես վերջին՝ 14-րդ մասլահաթը՝ նվիրված իր սիրելի թերթի 40-ամյա հոբելյանին:

Հոբելյանական այդ օրերին ծանր և անփոխարինելի էր կորուստը մեծ հրապարակախոսի ու դրամատուրգի, որի հեղինակությունը դասական արժեք էր ստացել, իսկ նրա անզուգական գործերը կմնան հավիտյան՝ պատիվ բերելով հայ մտքին ու տաղանդին, հայ ազգին:

Ծանր էր կորուստը հատկապես «Մշակ» լրագրի աշխատակազմի համար. այլևս իրենց հետ չէր մեծ խորհրդատուն ու ուսուցչապետը:

1912-ի «Մշակի» N 60-ում «Մի ամբողջ բանաստեղծություն» վերնագրով հոդվածում թերթի գլխավոր աշխատակից Հ. Առաքելյանը գրում է. «Մի ամբողջ բանաստեղծական երկ է ավանդել Սունդուկյանը իր «Կտակի» մեջ, որը թողել է «Մշակի» խմբագրության անունով: Մի ամբողջ բանաստեղծություն, կարելի է ասել նույնիսկ պոեմ կա այս կտակի մեջ, ուր նա ներկայացնելով իր վերջին կամքը իր թաղման մասին, ընդգծում է հայ հասարակության համար կենցաղի նոր ուղի, նոր ճանապարհ, կամ ավելի ճիշտ է ասել՝ վերադարձ դեպի նախկին հին, պարզ ու նահապետական ձևերը կենցաղի մեջ, դեպի պարզ, քրիստոնեական ապրելակերպ…»:

Ըստ մեծ մտավորականի, ճշմարիտ ուղին այն է, որ մարդկությունը դեն նետի փարթամությունը, շքեղությունը, ավելորդ զարդերը, շռայլությունները, անմիտ ծախքերը: Պատիվը, հարգանքը, ըստ Սունդուկյանի, ճոխության, փարթամության, պսակների, բազմաթիվ շուրջառավոր քահանաների ուղեկցության մեջ չեն. հարգանքը պետք է

մարդկանց սրտերի մեջ լինի: Նա արձան չուզեց, բայց խնդրեց կանգնեցնել Պեպոյի արձանը իր գերեզմանին, որը միայն կմարմնավորեր նշանակալի գեղարվեստական այն գործը, որը թողել էր մեծ դրամատուրգը:

Մեջբերում ենք նրա կտակից մի հատված. «Արարիչ Աստծո օրհնությունն եմ հայցում ձեզ վրա, շատ ապրեք, եղեք առողջ ու երջանիկ: Սիրեցեք միմյանց և ժողովրդին՝ ինչ ազգ ու հավատի որ լինի: Սիրեցեք առհասարակ ճշմարտությունն ու մարդասիրությունը, մի արեք ուրիշին այն, ինչ որ չեք ուզում որ անեն ձեզ: Աշխատեցեք բարին հատուցել չարի փոխարեն, որ կարող են ուրիշները ձեզ պատճառել, այն ժամանակ դուք կզգաք ձեր սրտում մի անբացատրելի հաճույք և մինչև իսկ բախտավորություն և կլինեք մեծ քրիստոնեական վարդապետության ճշմարիտ հետևողներ:

Մնաք բարով ընդմիշտ»:

Յավակցական հեռագրեր էին հղում հայ մտավորականության բոլոր խավերի ներկայացուցիչները աշխարհի բոլոր ծայրերից, որտեղ էլ որ ապրեին, ինչ կուսակցության էլ որ պատկանեին:

Տ. Նազարյանն արտասահման ուղարկեց Սունդուկյանի անհամար նկարներ՝ կլիշեներ պատրաստելու, իսկ մեծ գրողի մահվան 40 օրվա կապակցությամբ տպագրել էր «Տարազի» մի ամբողջ համար:

Հ. Առաքելյանը գրում է, թե Սունդուկյանին հայ հասարակությունը ոչ թե թաղում է, այլ հանձնում է հավիտենականության, անմահության: Գերեզմանը, որի մեջ իրենք պետք է ամփոփեն նրա աճյունը, միայն այն դուռն է, որով նա համարձակ պետք է անցնի անմահություն:

Սրտառուչ էր Ստ. Մալխասյանի խոսքը. «Շատերի աչքերից արտասունք քամեց, շատերին հիացմունք պատճառեց նրա կտակը՝ բանաստեղծ քաղաքացու վերջին կամքը այս աշխարհից առմիշտ հեռանալիս: Այնքան գրավիչ ու սրտառուչ է նա, այնքան վսեմ իր պարզության մեջ, այնքան խելացի ու մտածված, որ ըստինքյան մի ինքնուրույն գեղարվեստական երկ է հանդիսանում՝ ահագին կրթիչ նշանակությամբ: Կտակը նա ուղղում է ամբողջ հայ ազգին, պահանջում է պարզություն թաղման ժամանակ, որպեսզի ամեն մարդու մատչելի լինի այն»:

Սպ. Սպանդարյանը գրում էր. «Մշակ» լրագրի մեջ տպված Սունդուկյանի նշանավոր կտակը նրա սրտի և մտքի վերջին գոհարն էր, որով նա գիսավոր աստղի պես մեր կյանքի դժգույն երկնակամարում փայլեց ու անմահացավ»:

Բժշկապետ Բ. Նավասարդյանը, որը երկար տարիներ «Մշակի» խմբագրությունում աշխատել էր կողք կողքի Սունդուկյանի հետ, գրում էր. «Ճշմարտությունն ու արդարությունը Սունդուկյանի պաշտամունքն էր, ոչ մի անձնական շահ, ոչ մի կախում նյութական, պաշտոնավորական և այլ տեսակների՝ չէին կարող արգելք լինել նրան ճշմարտությունն ասելու: Այդ ես տեսել եմ հազարավոր դեպքերում, տասնյակ տարիներով, բայց լուսաբանության համար ասեմ, որ Հարություն Զիմզիմովի վատ արարքը նա իր սեփական աչքերով էր տեսել և անձնական շահի առումով Զիմզիմովի արարքը հավերժացրեց»:

Հազար երանի, որ մեր ազգը հետևի հարյուրամյա հեռավորությունից հնչեցրած մեծ դրամատուրգի ու մտավորականի հորդորին, և ինչպես ինքը կասեր՝ մարդանա:

ԱԼՈՅԱՆ Լ. Ա.
Բանասիրական գիտությունների դոկտոր